

ՄՈՆԻՏԱԼԻ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐԱՌՈՒՄԲԸ

ԲԵՔԱՐՅԱՆ Ա. Ա.

Մոնիթորավոր հաստատված պոլսահայերի ջանքերով 1967 թ. ստեղծվել է Պոլսահայ հայրենակցական միությունը: Դա Կանադայում գործող միակ հայրենակցական միությունն է, որը զերծ է բոլոր տեսակի քաղաքական, կրոնական, կուսակցական հոսանքներից, սակայն ամենից ազատամիտն է, ինչպես նաև հայկական ավանդույթների ջատագովն ու հավատարիմ պաշտպանը: Այդ հեռավոր ավերում Պոլսահայ միությունը հայությանը ջերմացած ու ջերմացնող մի ծածկ է, որը կոչված է հայրաքար պատասպարելու հայ բեկորներին: Այստեղ հավաքվում են հայրենակիցները՝ առօրյա հոգսերը թողափելու և արթնացնելու իրենց մեջ ամբարած անցյալի հիշողությունները: Միությունը պոլսահայերի մի հավաքատեղի է, որտեղ կազմակերպվում են համայնական, մշակութային, մարզական, երիտասարդական և այլ միջոցառումներ:

Կազմավորման առաջին իսկ օրվանից Պոլսահայ միությունն իբրև հիմնական ու անդրդվելի նպատակ է ընդունել հետևյալ սկզբունքը. համագործակցել կանադահայ բոլոր կազմակերպությունների հետ, ինչպես նաև կամուրջ դառնալ կանադահայ գաղթօջախի զանազան ու երբեմն մրցակից միությունների միջև: Խոսուն է թեկուզն այն փաստը, որ Պոլսահայ միության սրահը զարդարված է հայ մշակույթի ավելի քան քսան երախտավորների (անկախ նրանց կուսակցական պատկանելությունից) մեծադիր նկարներով, իսկ բեմի վերին մասում գեղազիր տառերով գրված է միության նշանաբանը՝ «Եղբայր եմք մեք»<sup>1</sup>:

Ինչպես Մոնիթորի բոլոր հայկական կազմակերպությունների, այնպես էլ Պոլսահայ միության առաջնահերթ նպատակն է օտար ավերում պահել-պահպանել հայեցի ոգին, օտարներին ծանոթացնել մեր մշակույթին, սովորեցնել մայրենի լեզուն մեր այն հայրենակիցներին, որոնք հանգամանքների բերումով հնարավորություն չեն ունեցել ժամանակին այն սովորելու, և դրանով իսկ պատենջ դառնալ ուժացմանը:

Միությունը 1969 թ. ունեցավ սեփական նորակերտ շենք-կենտրոնը, որի թատերասրահում նույն թվականի ապրիլի 12-ին տեղի ունեցավ միության անդրանիկ գեղարվեստական երեկոն: Հանդիսատեսների կողմից խանդավառությամբ ընդունված միջոցառումը տևել է երեք ու կես ժամ, իսկ ծրագրում, ինչպես տեղեկանում ենք մամուլից<sup>2</sup>, տեղ են գտել մեներգեր, մենապարեր, ասմունք, դաշնամուրային մենանվագներ, երեսուն հոգուց բաղկացած երգչախմբի (Գեղամ Շիրվանյանի

<sup>1</sup> Տե՛ս Մոնիթորի Պոլսահայ միությունը (ստորագրված է՝ Թղթակից, Քուլիս, Ստամբուլ, 1979, N 790, էջ 8):

<sup>2</sup> Պոլսահայ միության գեղարվեստական անդրանիկ երեկույթը (ստորագրված է՝ Թղթակից, (Բուրաստան, Մոնիթոր, 1969, N 67, էջ 27): Բարամբուլահայ միությունը Մոնիթորի մեջ (Քուլիս, Ստամբուլ, 1969, N 546, էջ 13):

դեկավարությամբ) համերգը, ինչպես նաև ներկայացվել է երկու կատակերգություն: Մակայն Պոլսահայ միության նորակառույց սրահում առաջին ամբողջական թատերական ներկայացումը տրվել է 1969 թ. մայիսի 10-ին կազմակերպված երեկույթի ընթացքում: Այդ երեկույթը կազմակերպվել է շատ ավելի հաջող ու անթերի, քան ապրիլի 12-ի անդրանիկ գեղարվեստական երեկոն, որը զերծ չէր առանձին անխուսափելի թերություններից: Այդ օրը ներկայացվել է Ֆերդինանդ Ռոմեի «Ա՛խ, աս մեծ մայրս» երեք գործողությամբ կատակերգությունը, որի հայկական տարբերակը պատրաստել էր պոլսահայ կինոռեժիսոր և դերասան Արշավիր Այյանաքյանը<sup>3</sup>: Բեմադրությունն իրականացրել է շնորհաշատ դերասան Նուպար Ֆրնտրքյանը, որի ջանքերի ու աշխատասիրության, ինչպես նաև դերասանների անթերի խաղի շնորհիվ, ըստ մամուլի վկայության<sup>4</sup>, ներկայացումն արժանացել է հանդիսականի բարձր գնահատականին:

Կատակերգության ամփոփ բովանդակությունը հետևյալն է. փաստաբան Վահենն իր հարուստ տատից դրամ կորզելու նպատակով ձևացնում է՝ իբր ամուսնացել է, զավակ է ունեցել և իր տուն է հրավիրել հարսի հորը: Մակայն անսպասելիորեն Վահենին է այցելում տատը՝ իր հոգեզավակ գեղեցկուհի Շուշանի հետ: Դրությունը փրկում է Վահեի ծառան՝ Մինասը: Վերջինս Վահենին է տրամադրում իր զավակին, ընկերոջը՝ դերասան Հրաչին, որն ստանձնում է խաղալ Վահեի կնոջ դերը, և Վահեի պաշտպանյալ Թոքմաք Պողոսին: Նա էլ խաղում է Վահեի աներոջ դերը: Ի վերջո իրողությունը բացահայտվում է, սակայն ամեն ինչ լավ է ավարտվում՝ Վահեն ամուսնանում է Շուշանի հետ, ում սիրում էր վաղուց: Մոտ երկու ժամ տևող ներկայացումը մեծ բավականություն է պատճառել և բազմաթիվ զվարճալի պահեր պարզնել հանդիսատեսին: Ներկայացման կենտրոնական դեմքն է դարձել Մկրտիչ Ծատուրյանը (Մինաս), որն իր անթերի խաղով՝ թե՛ դիմախոսությամբ, թե՛ տպավորիչ խոսքով, թե՛ շարժումով, ծիծաղելի և անմոռանալի պահեր է պարզնել ներկաներին: Բնական և հաջող են խաղացել նաև մյուս դերակատարները՝ Գեղամ Շիրվանյանը (Վահե), Միհրան Չաքրրավճյանը (Թոքմաք Պողոս), Նուպար Ֆրնտրքյանը (Հրաչ), Իսկուհի Հովնանյանը (մեծ մայր), Պայծառ Հյուրը (Հրաչի հարսնացու), Արփի Կուլտը (Շուշան), Գարեգին Օտապաշյանը (բժիշկ), Աննա Փեղիվանյանը (Մինասի կին):

Մամուլում նաև նշվում է, որ կատակերգության թարգմանության մեջ տեղ են գտել անհարկի, ոչ մաքուր հայերեն արտահայտություններ, թուրքերեն բացատրություններ և բացականչություններ, որոնք ոչ մի նոր բան չեն հավելել

<sup>3</sup> Այյանաքյան (Այյանաք) Արշավիր, կինոռեժիսոր և դերասան: Ապրել և ստեղծագործել է Կ. Պոլսում: Ի դեպ, Ա. Այյանաքյանը նկատելի դեր է ունեցել նաև թուրքական կինոարվեստի զարգացման գործում: Նրա ռեժիսորությամբ և մասնակցությամբ նկարահանվել են «Գյուլնազ» և «Լեյլայի մեղքը» ֆիլմերը, որոնց մասնակցել են նաև մի քանի հայ դերասաններ:

<sup>4</sup> Քանատահայ կյանք. Պոլսահայ միության թատերական երեկոն (ստորագրված է՝ Թղթակից, Հայրենիք, Բոստոն, 1969, 24 մայիսի):

կատակերգության զվարճալի բովանդակությանը<sup>5</sup>: Մյուսիսի ձեռնարկումները նպաստել են, որ թատերական ձիրքով օժտված դերասանական շատ նոր ուժեր հայտնվեն ու կոփվեն, ինչպես նաև հնարավորություն են ստեղծել Մոնրեալի համայնքի շնորհալի ու խոստումնալից դերասանների համատեղ ելույթների համար: Դա, ինչպես նշում է «Հայրենիք» օրաթերթը, միանգամայն բխում էր Պոլսահայ միության նպատակներից ու ձգտումներից՝ «Գործակցութիւն և հավաքական ճիգ, ահա կարգախոս մը՝ որուն պետք է ձգտին զանազան կազմակերպություններ»<sup>6</sup>:

Պոլսահայ միության մշակութային մարմնի նախաձեռնությամբ 1970 թ. հունվարի 17-ին բեմադրվել է իտալացի դրամատուրգ Դարիո Նիկոլեմիի<sup>7</sup> «Վաղահասը» երեք գործողությամբ կատակերգությունը, որը հայտնի է նաև «Փողոցի աղջիկը» և «Անչափահասը» անվանումներով: Կատակերգության հերոսուհին անչափահաս մի գեղեցիկ աղջիկ է, որը մեծացել է անխնամ ու անուս, անհաղորդ քաղքենիական կեղծ բարքերին ու սովորություններին և ամեն ինչում հանդես է բերում մանկական միաստություն: Այս հատկությունների ու բնական գեղեցկության շնորհիվ նրան սիրում են բոլորը: Սակայն ոչ մեկը նրա նկատմամբ չի ցուցաբերում անկեղծ սեր և ընտանիք կազմելու ցանկություն: Այդ պատճառով էլ նրա պարզունակ ու մաքուր հոգում ի հայտ են գալիս և միախառնվում այնպիսի իրարամերժ զգացումներ և զգացումներ, ինչպիսիք են սերը, խանդը, արհամարհանքը, մեթուսը, վրեժխնդրությունը, որոնք բազմապատկում են մի կողմից նրան հետապնդողների, իսկ մյուս կողմից՝ վրեժխնդրությամբ լցված կանանց թվաքանակը: Պիեսը բեմադրել և գլխավոր դերով հանդես է եկել շնորհաշատ դերասանուհի Ա. Գույումձյանը<sup>8</sup>, որը փորձել է հանդիսատեսին ներկայացնել իր հերոսուհու բարդ հոգեվիճակը՝ կատակերգականի տակ ցուցադրելով խորապես ողբերգական մի կյանք: Մնացած դերերով հանդես են եկել տիկին Մայլըքը (Ֆրանկա), Նուպար Ֆրնտըքյանը (Տիտուս),

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> **Նիկոլեմի Դարիո** (1874-1934), իտալացի դրամատուրգ: Մանկությունը և պատանեկությունը անցկացրել է Բուենոս-Այրեսում: Առաջին պիեսները գրել է իսպաներեն: Առաջին համաշխարհայինի սկզբին տեղափոխվել է Բոտալիա և հաստատվել Միլանում: Եղել է իտալացի այն դրամատուրգներից, որոնց պիեսները հաճախակի են տեղ գտել թատրոնների խաղացանկերում:

<sup>8</sup> **Գույումձյան Անահիտ**, սփյուռքահայ դերասանուհի (ծնվ. 1938 թ., Կ. Պոլիս): Մանուկ հասակից զանազան դերեր է կատարել տարբեր վարժարաններում կազմակերպված հանդեսներում և ներկայացումներում: Ավարտել է Կ. Պոլսի կոնսերվատորիան: Առաջին անգամ մեծահասակների հետ խաղացել է 15 տարեկան հասակում՝ Ա. Մադաթյանի բեմադրությամբ «Վաղահասը» պիեսում: 1967 թ. հոկտեմբերին տեղափոխվել է Կանադա: Խաղացել է Մոնրեալի Պոլսահայ միության կազմակերպած «Մեծապատիվ մուրացկաններ», «Շողոքորթը», «Օրիորդ Շոքոլա», «Վաղահասը» ներկայացումներում, «Անուշ» օպերայում, Հայ համագգային մշակութային միության «Պետրոս Ադամյան» թատերախմբի «Ինկած բերդի իշխանուհին», «Եսին մարդը», «Շոքար և ընտանիքը», «Աշխարհն, այո, շուտ է եկել», «Գունկը կը կանչե» և այլ ներկայացումներում, ինչպես նաև գլխավոր դերով հանդես է եկել Միեր Մկրտչյանի բեմադրած «Պաղտասար աղբար» կատակերգության մեջ: Հյուրախաղերով հանդես է եկել Տորոնտոյում, Բոստոնում, Նյու Ջերսիում և Ֆիլադելֆիայում:

Միհրան Չաքրրավճյանը (Օգոստ), Գեղամ Շիրվանյանը (Շյուլ), Հաբեթ Մայրըքը (Էմիլ), Նիկողոս Թումպաքճյանը (Ֆաուստ): Ըստ կանադահայ մամուլի՝ Պոլսահայ միության սրահում խաղացվել է մի ներդաշնակ ներկայացում, որին ներկա է եղել հոծ բազմություն<sup>9</sup>:

Նույն տարվա հունիսի 13-ին Ա. Գույումճյանի բեմադրությամբ ներկայացվել է Պոլ Գավոյի «Օրիորդ Շոքոլա» չորս գործողությամբ կատակերգությունը, որը հայերեն էր թարգմանել պոլսահայ հանրահայտ դերասան ու բեմադրիչ Աշոտ Մադաթյանը<sup>10</sup>: Ա. Գույումճյանից բացի՝ դերերով հանդես են եկել Առաքել Գոմպաքյանը, Իրմա Մերաքյանը, Արաքսի Ոսկանյանը, Հերման Ճեհեննեմյանը, Որդիկ Միրասետին, Մարի Օհանյանը, Միհրան Ավճյանը (Չաքրրավճյան), Գրիգոր Մերաքյանը, Նիկողոս Թումպաքճյանը<sup>11</sup>: Չնայած դերասաններից շատերը առաջին անգամ էին բեմ բարձրանում, սակայն հայ մշակույթի անխոնջ նվիրյալ Ա. Գույումճյանի ղեկավարությամբ նրանք արեցին ամեն հնարավորը՝ դրսևորելով իրենց ողջ կարողությունը, և հասարակությանը հրամցրին բարձրխաղային մակարդակով մի ներկայացում: Ներկայացումը շատ ջերմ ընդունելության արժանացավ: Դերասանները մեծ ոգևորությամբ այն կրկնեցին հունիսի 20-ին<sup>12</sup>:

Պոլսահայ միության սրահում 1971 թ. հունվարի 31-ին Գ. Շիրվանյանի բեմադրությամբ տրվել է երկու փոքր, բայց հետաքրքիր ներկայացում՝ «Փարոսի պահապանները» և Մոլիերի «Երկու խուլերը»: Առաջինում դերերով հանդես են եկել փորձառու դերասան Գեղամ Միմոնյանը և Կեդրոնական վարժարանի շրջանավարտ Հերման Ճեհեննեմյանը<sup>13</sup>: Երկրորդ ներկայացման մեջ հանդես են եկել Գրիգոր Մերաքյանը (խուլ հայր), Լուլու Ազնավուրը (դուստր), Հերման Ճեհեննեմյանը (Պոնիֆաս), Որդիկ Միրասետին (սպասավոր): Այդ պիեսները ջերմ ընդունելության արժանացան, քանի որ (Պոլսահայ միության «Գեղարդ» հանդեսի վկայությամբ) «որոշ իմաստասիրություն պարունակող խաղը, որ այնքան ծափ ու քրքիջներ խլեց, խաղացողներու ճկունութեան կը պարտեր հաւանաբար: Լաւ մարմնացուցին բոլոր խաղացողները իրենց ստանձնած տիպարները»<sup>14</sup>:

Պետք է ասել, որ Պոլսահայ միության մշակութային մարմնի թատերախումբը

<sup>9</sup> Վ. Բ., Թատերական ներկայացում Պոլսահայ միության մեջ (Բուրաստան, Մոնրեալ, 1970, N 77, էջ 13):

<sup>10</sup> Մադաթյան Աշոտ (Մադաթյանց, 1882-1965), ծնվել է Թեհրանում: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը խաղացել է Հ. Չարիֆյանի, Միրանույշի, Վ. Փափազյանի, Էդ. Չափրաստի, Ն. Պեշիկթաշյանի, Ֆելեկյան քույրերի և մյուսների հետ: 1918 թ. Հայկական կազմակերպում է «Մելպոմենե» թատերախումբը, այնուհետև տեղափոխվում Կ. Պոլսի «Դրամատիկ» թատերախումբ: Հետագայում իր թատերական և գրական գործունեությունը շարունակել է Բեյրութում և Կ. Պոլսում:

<sup>11</sup> Վ. Բ., N 82, էջ 11:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Ա. Ա., Թատերական (Գեղարդ, Մոնրեալ, 1971, N 7, էջ 27):

<sup>14</sup> Նույն տեղում:

կարճ ժամանակամիջոցում մեծ համբավ ձեռք բերեց մոնրեալահայերի մոտ: Դա, առաջին հերթին, թատերախմբի ղեկավար Անահիտ Գույումճյանի աշխատանքի արդյունքն էր: Շնորհիվ բնատուր դերասանական տաղանդի և աշխատասիրության՝ նրան հաջողվեց իր շուրջ համախմբել բազմաթիվ համախոհների: Նրանք պարբերաբար կազմակերպում էին հայերեն ներկայացումներ՝ նը-պաստելով Մոնրեալում ազգապահպան շնորհակալ գործին: Մոնրեալահայ գաղութում Ա. Գույումճյանի վայելած մեծ հեղինակության մասին է վկայում նաև 1972 թ. մայիսի 28-ին Պոլսահայ միության սրահում մշակութային մարմնի թատերախմբի ընթացիկ տարվա ճոխ ծրագրի առաջին ելույթը: «Հեղձուցիչ տաքերը սկսած էին Գանատայի մեջ, սակայն չ'ունեցան մտավախությունը սրահը պարապ տեսնելու, որովհետև բեմադրիչն էր Տիկ. Անահիտ Գույումճեան-Ոսկերիչեան, եւ միեւնոյն ատեն կարելոր դերակատարը: Ամիսներէ ի վեր տուներու մէջ նիւթ եղած էր այն շնորհալի հայուհիին բացառիկ կարողութիւնը»<sup>15</sup>: Այդ օրը ներկայացվել է Հ. Պարոնյանի «Շողոքորթը» պիեսը: Ներկայացման դերակատարներ ընտրելիս Ա. Գույումճյանը հիմնական ուշադրությունը կենտրոնացրել է երիտասարդ ուժերի վրա՝ «փափաքելով անոնց մեջ եւս ներմուծել Մեծաքանչի, Հայ մշակոյթի սերն ու գուրգուրանքը»<sup>16</sup>: Դերերով հանդես են եկել Պոլսահայ միության «Արարատ» ֆուտբոլային թիմի մարզիչ Որդիկ Միրասետին (Թադէ), Մուրադ Խաչիկյանը (Արշակ), Գեղամ Շիրվանյանը (Բարթեմ), Գևորգ Այվատյանը (Պապիկ՝ Շողոքորթ), Գրիգոր Մերաքյանը (Հովսեփ), Մելլա Յալտրզճյանը (Սոֆի), Արման Սևկեն (Տիգրան), Լևոն Գարանֆիլը (Գևորգ): Ինքը՝ Անահիտ Գույումճյանը, հանդես է եկել Թադէի քրոջ՝ Թերեզայի դերով: Պոլսահայ միության սրահը լեփ-լեցուն է եղել թատերասեր հասարակայնությամբ: Ներկայացումն ունեցել է մեծ հաջողություն, հանդիսատեսները մեծ հաճույքով հետևել են ներկայացմանը՝ «սրելով իրենց ախորժակը ի տես հրավցուած հոգեկան մեծ սնունդին»<sup>17</sup>: Հատկապես ջերմ ընդունելության է արժանացել Ա. Գույումճյանը: Ականատեսների վկայությամբ, երբ «մուտք կը գործէ ներկայացումի հերոսուհին, կը թնդայ սրահը, կարելի չըլլար լսել արուեստագետ ծնողի հարազատ ու պատուական ներկայացուցիչը, իր հեզահամբոյր բնատրուրթեամբ գաղութին հիացումին առարկա պարկեշտ հայուհին՝ Տիկ. Անահիտ Գույումճեանը»<sup>18</sup>:

Մեծ հաջողություն է ունեցել նաև Պապիկի՝ Շողոքորթի երիտասարդ խոստումնալից դերակատար Գևորգ Այվատյանը, որի հոգու մեջ, ինչպես նշում է Ստամբուլի «Քուլիս» հանդեսը, «Տիկ. Անահիտ Գույումճեան հակառակ իր բազմազբաղ վիճակին, մեծ համբերութեամբ և ճարտարութեամբ կարողացած է

<sup>15</sup> Գարանֆիլ Վ., «Շողոքորթը» Պոլսահայ միության թատերաբեմին վրա (Գեղարդ, Մոնրեալ, 1972, N 12, էջ 26):

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Գարանֆիլ Վ., Հ. Պարոնյանի «Շողոքորթը»-ը Մոնրեալի Պոլսահայ միության մեջ (Քուլիս, Ստամբուլ, 1972, N 612, էջ 22):

<sup>18</sup> Նույն տեղում:

արուեստի բոլոր նրբությունները քանդակել»<sup>19</sup>, և որը «ճիշդ երկու ժամ կը հրապուրէ ներկաները արժանանալով անխտիր բոլորին շնորհատրություն»<sup>20</sup>:

Ներկայացման հաջողությանը զգալիորեն նպաստել են նաև Գեղամ Շիրվանյանը և Լևոն Սապունճյանը: Առաջինը, բացի Բարթեմի կերպարի հաջող մարմնավորումից, կատարել է նաև բեմահարդարի աշխատանքը, իսկ երկրորդը մեծ բարեխղճությամբ ու ճաշակով իրականացրել է դիմահարդարման աշխատանքները:

Պոլսահայ միության ստեղծման առաջին իսկ օրերից նրա մշակութային հանձնախմբում անխոնջ ազգօգուտ գործունեություն են ծավալել Մխիթարյան, Էսայան և Կեղրոնական վարժարանների նախկին շրջանավարտները: Նրանց ջանքերով ու նախաձեռնությամբ էլ 1973 թ. ստեղծվել է Պոլսահայ միության ՄԷԿ մշակութային մարմինը, որն այդպես է անվանվել միության վարչության նախագահ Ժիրայր Այվատյանի հղացումով՝ վերոհիշյալ վարժարանների սկզբնատառերով: ՄԷԿ մշակութային մարմինն ունի «Մնակյան» թատերախումբը<sup>21</sup>, որը կանադահայ գաղութում ծավալել է ոչ կանոնավոր, սակայն աշխույժ և ուշագրավ թատերական գործունեություն: ՄԷԿ մշակութային մարմինը գործում է «ՄԷԿ և անբաժանելի հայություն ՄԷԿ և անբաժանելի մշակույթ» նշանաբանով՝ անխտիր համագործակցելով բոլոր հայկական կազմակերպությունների և միությունների հետ, իրենց քննադատներին վերաբերելով ՄԷԿ մշակութային մարմնի նախագահ, քիմիկոս Գաբրիել Պասմաճյանի խոսքերով ասած՝ «թողունք որ խոսին՝ թողուն որ գործենք...» սկզբունքով<sup>22</sup>:

Պոլսահայ միության նախաձեռնությամբ 1976 թ. ապրիլի 4-ին Ութրբոնն Հայ Մքուլի թատերասրահում ներկայացվել է Ու. Հաջիրեկովի «Մա չիին՝ նա լինի» օպերետը երաժշտագետ Ե. Ալեքսանյանի<sup>23</sup> ղեկավարությամբ և երգչուհի Սելմա

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Էվերեկյան Դ., Պոլսահայ միություն. «Շիրակ» պարախումբ (Քուլիս, Ստամբուլ, 1979, N 774, էջ 10):

<sup>22</sup> Պասմաճյան Գ., Պոլսահայ միության դերը և գործունեությունը (Գեղարդ, Սոնրեալ, 1977, N 41, էջ 13):

<sup>23</sup> Ալեքսանյան Երվանդ (1908-1981), սփյուռքահայ խմբավար, ծնվել է Ալեքսանդրիայում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Պողոսյան ազգային վարժարանում: Փոքր հասակից սեր է ցուցաբերել երաժշտության նկատմամբ և դեռևս 17 տարեկանում ելույթներ է ունեցել օտար նվագախմբերի հետ: Երաժշտական կարողությունները մասնավոր դասընթացների միջոցով կատարելագործել է երաժշտագետ Ֆրաբուչինիի (Frabucini) մոտ՝ սովորելով կոմպոզիցիա և գործիքավորում: Երգչախմբեր-նվագախմբեր է կազմակերպել Ալեքսանդրիայում (1926), Կահիրեում (1940) և Մոնրեալում (1964), որոնք բոլորն էլ կրել են Հայ համազգային մշակութային միության «Քնար» երգչախումբ-նվագախումբ անվանումը: Ստեղծել և մշակել է բազմաթիվ երգեր, ինչպես նաև դաշնավորել է հայ և օտար երաժշտական ստեղծագործություններ: 1976-ին թողարկվել է Ե. Ալեքսանյանի երաժշտական գործունեության 50-ամյա հորելյանի առթիվ կայացած համերգի ձայնապնակը:

Քեքլիկյանի բեմադրությամբ<sup>24</sup>: «Մոյն անունները երբ երեւին թատերական ձեռնարկի մը մէջ, յաջողութիւնը մեծաւ մասամբ ապահովուած կարելի է նկատել,- տեղեկանում ենք սփյուռքահայ մամուլից,- քանի որ անոնք ունին բրոֆեսիոնէլ գետնի վրայ եւս համբավ, հայ և օտար շրջանակներու մէջ»<sup>25</sup>: Այնուհետև թատերախոսն ավելացնում է. «Օփերէթի մը յաջողութեան գլխաւոր պայմանը դերակատարներուն ձայնային հարմարութիւնն է՝ տրուած երգերը գոհացուցիչ կատարումով մը ներկայացնելու համար: Նկատի ունենալով սփիւռքի դժուար, գրեթէ անիրականալի պայմանները, գտնել, քով-քովի բերել երգող դերակատարներ մեծ աշխատանքի կը կարօտի եւ Ալեքսանեանի եւ Քեքլիկեանի անխոնջ ճիգերով «Մա չլինի՝ նա լինի» օփերէթի ներկայացումը յաջողութիւն մը եղաւ, արժանանալով ներկա հասարակութեան ջերմ գնահատանքին»<sup>26</sup>: Գլխավոր գործող անձի՝ Մաշադի Իբաթի կերպարը մարմնավորել է Արտո Նշանյանը՝ «հայ բեմի անխոնջ և երկար տարիներու նվիրեալ ծառայողը», որն «այս անգամ եւս, ինչպէս միշտ, խորապէս տիրապետած էր իր դերին, և անթերի խաղարկութեամբ ժողովուրդին ներկայացուց իր մարմնավորած կերպարը»<sup>27</sup>:

Գալուստյան Ազգային վարժարանի շրջանավարտ Արտո Նշանյանը ծնվել է 1933 թ. Կահիրեում: Փոքր հասակից տարվել է թատրոնով: «1939 թ., պատերազմի տարիներուն,- հիշում է Արտո Նշանյանը,- Արփիար Վարդյան»<sup>28</sup> կը սարքեր բացօթյա

<sup>24</sup> Քեքլիկյան Սելմա (ծնվ. 1927), սփյուռքահայ օպերային երգչուհի, դերասանուհի, ազգային գործիչ, ծնվել է Մալոնիկում՝ արվեստագետի ընտանիքում: Մանուկ հասակում ծնողների հետ տեղափոխվել է Կահիրե, սովորել տեղի Նուպարյան Ազգային վարժարանում և Սենթ Քլերս քոլեջում: Ելույթներ է ունեցել Կահիրեի ռադիոյով: Ավարտել է Կահիրեի կոնսերվատորիան: Եղել է Կահիրեի պետական օպերային թատրոնի երգչախմբի անդամ, դերեր է ստանձնել հյուրախաղերի եկած Միլանի «Լա Սկալա» և Բելգրադի օպերային թատրոնների մենակատարների հետ: 1962 թ. տեղափոխվել է Մոնրեալ, հանդես եկել մենահամերգներով, ելույթ ունեցել կանադական հեռուստատեսությամբ, Մոնրեալի օպերային թատրոնում (երգել է «Քույր Անջելիկա», «Ֆաուստ», «Ռիգոլետտո», «Լոմեո և Ջուլիետ», «Դոն Կարլոս», «Մակբեթ», «Մամոն և Դալիլա» և այլ օպերաներում): Մոնրեալի օպերային թատրոնի հետ հյուրախաղերով հանդես է եկել Կանադայի զանազան քաղաքներում, ԱՄՆ-ում և այլ երկրներում: Համերգների ժամանակ իր երգացանկում միշտ ունեցել է հայ երգը՝ մեծ ընդունելության արժանանալով օտարազգի հասարակության կողմից: 1976 թ. հիմնել է «Արմենյան» թատերախումբը: 1987 թ. ծննդյան 60-ամյակի առթիվ պարգևատրվել է Կանադայի կառավարության պատվոգրով:

<sup>25</sup> Մոնրեալի Պոլսահայ միության նախաձեռնությամբ «Մա չլինի՝ նա լինի» օփերէթին ներկայացումը (ստորագրված է՝ Թղթակից), «Քույր», Ստամբուլ, 1976, N 712, էջ 4:

<sup>26</sup> Մոնրեալի Պոլսահայ միության նախաձեռնությամբ «Մա չլինի՝ նա լինի» օփերէթին ներկայացումը (ստորագրված է՝ Թղթակից), Քույր, Ստամբուլ, 1976, N 712, էջ 4:

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Վարդյան Արփիար (1898-1978), սփյուռքահայ հանրահայտ դերասան և բեմադրիչ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Կ. Պոլսից տեղափոխվել է Եգիպտոս, որտեղ կազմակերպել է իր թատերախումբը և բազմաթիվ ներկայացումներ (բոլորն էլ կատակերգություններ) սովել Կահիրեում, Ալեքսանդրիայում և այլ հայաշատ քաղաքներում: 1960-ական թթ. հաստատվել է Մոնրեալում և շարունակել է իր թատերական գործունեությունը: Մասնավորապես բեմադրել է «Չարլիի կնքամայրը»,

ներկայացումներ: Երեք ժամ առաջ կ'երթայինք ներկա ըլլալու և հաճախ կը վոնրտվեինք»<sup>29</sup>: Առաջին անգամ բեմ է բարձրացել 16 տարեկանում՝ խաղալով Գառնիկ աղայի դերը Երվանդ Օտյանի և Միքայել Կյուրճյանի «Չարշըլը Արթին աղա» կատակերգության մեջ: Խաղացել է Կահիրեի Համազգային, Հայ Գեղարվեստասիրաց և Ընթերցասիրաց միությունների, ինչպես նաև Արաքսի Օհանյանի<sup>30</sup>, Արփիար Վարդյանի, Սեդի Գոչունյանի<sup>31</sup> անհատական թատերախմբերում: Ա. Նըշանյանը այդ շրջանում նախընտրել է խաղալ օպերետային և պատմական թեմաներով ներկայացումներում՝ «Ուշ լինի, նուշ լինի», «Սայաթ-Նովա», «Վարդանանք», «Դյուրան Դյուրան», «Սոնյա» և այլն՝ կատարելով գլխավոր դերեր<sup>32</sup>: Ա. Նշանյանը, 1963 թ. հաստատվելով Կանադայում, նշանակվում է Մոնրեալի Ս. Հակոբ եկեղեցու դպրապետ: Այնուհետև եկեղեցու ֆոնդի համար մի քանի խանդավառ երիտասարդների հետ բեմադրում են Մոնրեալում հայերեն անդրանիկ օպերետային ներկայացումը՝ «Ուշ լինի, նուշ լինի» (Գ. Երիցյան), ինչպես նաև ուրիշ թատերգություններ, իսկ ապա Բոստոն են հրավիրվում՝ կրկնելով Մոնրեալում բեմադրած ներկայացումները:

Վերոհիշյալ «Մա չինի նա լինի» ներկայացման մեջ Գյուլնազի դերով հանդես է եկել Նորա Անտոնյանը, որն իր գեղեցիկ ձայնով և շնորհալի խաղով գերել է հանդիսատեսին: Երգի լավագույն կատարումով և համոզիչ ու համակրելի խաղով հանդիսատեսի վրա խոր տպավորություն է թողել նաև սիրահարի՝ Սարվարի դերակատար Արթուր Աբգարյանը, իսկ Գյուլնազի հոր՝ պիեսի երկրորդ տարեց

«Տիկին Մոնկոտեն», «Կինս ետ տուր», «Սամաթիացի դայի Կարապետ», «Արշին մալ ալան», «Կեսարիայի վարդերը», «Դյուրան Դյուրան» և այլ ներկայացումներ:

<sup>29</sup> Էվերեկյան Դ., Արթոն Նշանյանի հետ (Քուլիս, Ստամբուլ, 1978, N 760, էջ 10-11):

<sup>30</sup> Օհանյան Արաքսի (Վարդյան, 1911-1981), սփյուռքահայ դերասանուհի: Ծնողները գոհ են գնացել Մեծ եղեռնին: 1918 թ. բարեգործական կազմակերպությունների շնորհիվ փրկվել և տեղավորվել է Կ. Պոլսի Առնաուտ գյուղի որբանոցում: 1922 թ. որբանոցի հետ տեղափոխվել է Հունաստան, իսկ 1924 թ.՝ որդեգրվել եգիպտահայ ընտանիքում: Առաջին անգամ բեմ է բարձրացել 1927 թ. Կահիրեում՝ խաղալով Սոֆիի դերը Հ. Պարոնյանի «Շողոքորթը» պիեսում: Քառասուն տարի խաղացել է չորս հարյուրից ավելի թատերգություններում, որոնցից շատերը ինքն է թարգմանել կամ վերածել թատերգության: Գրել է նաև կատակերգություններ ու դրամաներ («Հարս խաթուն», «Սայաթ-Նովա», «Ռոզիկը», «Անմեղ մեղավորը», «Նշանածները», «Կյանքին հեզնանքը», «Գյուտին գոհը», «Մալվինե», «Մա նչ թե աղջիկ կամ օրիորդ մայրիկը» և այլն): Մասնակցել է նաև հունական, արաբական և թուրքական թատերախմբերի ներկայացումներին: 1934 թ. առաջին անգամ հայ երգը ներկայացրել է Եգիպտոսի ռադիոունկնդիրներին:

<sup>31</sup> Գոչունյան Սեդի (ծնվ. 1927, Կահիրե), սփյուռքահայ դերասան: Դերասանական առաջին քայլերը կատարել է անգլերենով՝ մասնակցելով անգլիական դպրոցների և «Գրին Ռուս» թատերախմբերին: 1947 թ. խաղացել է եգիպտահայ բեմում: 1951 թ. գրադվել է նաև ռեժիսորական գործունեությամբ՝ բեմադրելով Պ. Ջիոկոմետտիի «Ուրազործի ընտանիքը», Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» և այլն: Նկարահանվել է եգիպտական և ամերիկյան մի շարք ֆիլմերում: Հետագայում հաստատվել է Ավստրալիայում, որտեղ նույնպես շարունակել է իր թատերական և գրական գործունեությունը:

<sup>32</sup> Էվերեկյան Դ., Արթոն Նշանյանի հետ, էջ 11:



գլխավոր անձի դերը ստանձնել էր Պոլսահայ միության անխոնջ ու գործունյա անդամ, բժիշկ Սարգիս Սանդիկյանը: Ականատեսի վկայությամբ՝ «հակառակ իր երիտասարդ հասակին, բնական և ճարտար կերպով խաղաց մեծ հոր դերը, համոզելով մեզ նիւթապէս փճացած մարդու մը խորամանկ միջոցներով կացութիւնը փրկելու ստիպողականութեան տառապալից վայրկեանները»<sup>33</sup>:

Գյուլնազի աղախնու դերում հանդես է եկել Աշխեն Հացագործյանը՝ հմտորեն կերտելով այդ ճարպիկ ու խորամանկ կնոջ կերպարը: Իրենց բնական և անկեղծ խաղով աչքի են ընկել նաև Հ. Գաթարոյանը, Հ. Պահլավը, Վ. և Գ. Հակոբյան եղբայրները և Ժ. Գարակոյանը:

յս ներկայացման հաջողությանն իրավամբ նպաստել են նաև Ե. Ալեքսանյանը՝ իր նվագախմբով, բեմադրիչ Ս. Քեքլիկյանը, ինչպես նաև Պ. Դավթյանի ղեկավարած Պոլսահայ միության պարախումբը: Առանձնապէս հետաքրքիր է եղել ներկայացման խանդավառ ավարտը՝ հարսանիքի ճոխ տեսարանով:

Պոլսահայ միության «Գեղարդ» հանդեսի տասնամյակին նվիրված հանդիսությունները 1982 թ. ապրիլին եզրափակվեցին զանազան թատերգությունների հատվածներից կազմված թատերախաղով, որը ներկայացրեց բազմավաստակ արվեստագետ-դերասան Դավիթ Էվերեկյանը «Թատերափունջ» անվան տակ: Տաղանդավոր դերասան, շնորհալի բեմադրիչ, թատերական գործիչ, թատերախմբերի հիմնադիր Դ. Էվերեկյանը (ծնվ. 1927, Բեյրութ) թատերական աշխարհ է մուտք գործել Լիբանանում 1943 թ.: Նա քառասուն երկար տարիներ անհավատալի համեստությամբ և անսահման նվիրումով ծառայել է հայ թատրոնին՝ դերասանական խաղով, բեմադրություններով, թատերախմբեր հիմնելով, թատերական լրատվություններ ու թղթակցություններ գրելով, տեղական և հյուրախաղերի եկած թատերախմբերի ներկայացումներին մասնակցելով: Դ. Էվերեկյանը մասնակցել է Գևորգ Պաղճյանի (Վազգեն Այգունի) հիմնած «Ռուբեն Մամուլյան» թատերախմբի (1943-1945) աշխատանքներին: Նա «Լիբանանահայ» (1946-1954), «Պետրոս Ադամյան» (1953-1957), «Քուլիսական» (1961-1966) թատերախմբերի հիմնադիրներից և նվիրված գործիչներից է<sup>34</sup>, ինչպես նաև բազմաթիվ թատերախմբերի, դերասանների բեղմնավոր ու եռուն գործունեության ականատեսը, ճշմարտախոս վկան ու ժամանակագիրը: Դ. Էվերեկյանը հրատարակել է «Թատերագիր» գրքույկը, որտեղ տեղ են գտել սփյուռքահայ անվանի դերասաններ Բ. Աբովյանը<sup>35</sup>, Ա. Մադաթյանը, Մ. Մարությանը<sup>36</sup>, Էդ. Չափրաստը<sup>37</sup>, Տ. Աճեմյանը<sup>38</sup>, Պ.

<sup>33</sup> Մոնրեալի Պոլսահայ միության նախաձեռնությամբ «Մա չլինի նա լինի» օփերեթին ներկայացումը (ստորագրված է՝ Թղթակից, Քուլիս, Ստամբուլ, 1976, N 712, էջ 5):

<sup>34</sup> Շիրվանյան Գ., Թատերափունջ մը (Գեղարդ, Մոնրեալ, 1982, N 58, էջ 15):

<sup>35</sup> Աբովյան Բարսեղ (1880-1959), ծնվել է Թիֆլիսում: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը խաղացել է Կովկասում գործող բազմաթիվ հայկական թատերախմբերում, այնուհետև մեկնել է Պարսկաստան, իսկ պատերազմից հետո՝ Միրիա, Լիբանան, Եգիպտոս: Ի վերջո հաստատվել է Միրիայում, որտեղ ունեցել է բեմական երկարամյա գործունեություն: Նախասիրած դերերից են եղել՝

Մենտիյանը<sup>39</sup>, Ժ. Սարգիսյանը<sup>40</sup>, ինչպես նաև հայ մեծ դերասաններ Վ. Փափագյանը, Գ. Ջանիբեկյանը, Ա. Ավետիսյանը և ուրիշներ: Սակայն, դժբախտաբար, Դ. Էվերեկյանի բեղուն և արդյունավետ գործունեությունը Լիբանանում ընդհատվեց երկրի քաղաքական անկայուն և անբարենպաստ պայմանների հետևանքով և 1975 թ. նա ընտանիքով հեռացավ Լիբանանից և հաստատվեց Մոնրեալում: Այստեղ ևս նա վերստեղծում է իր թատերական միջավայրը: Շնորհիվ իր դյուրահաղորդ և համեստ բնավորության՝ նա մտերիմներ է գտնում նաև Պոլսահայ միության մեջ և շուտով դառնում ՄԷԿ մշակութային մարմնի քարտուղարը (ատենադպիրը):

Դ. Էվերեկյանի ներկայացրած թատերափունջը պարունակում էր հատվածներ

Էլիզբարով («Պատվի համար»), Բարխուդար և Ռուստամ («Նամուս»), Մուլեյման խան («Դավաճանություն»), Ֆրանց և Կարլ Մոոր («Ավագակներ»), Վանահայր («Հին աստվածներ»), Գիժ Դանիել («Չար ոգի») և այլն:

<sup>36</sup> **Մարության Մանվել** (1901-1986), ծնվել է Վանում, հաճախել է Վիեննայի դրամատիկական ակադեմիայի դասընթացներին, որից հետո կազմել է թատերախումբ և շրջել սփյուռքի հայաշատ քաղաքներում՝ խաղացանկում ունենալով Շեքսպիրի, Շանթի, Շիրվանզադեի և Պարոնյանի պիեսները՝ ստանձնելով գլխավոր դերերը: Գրել է նաև պիեսներ («Խավարի միջից», «Կարմիր սուլթան», «Կոմիտաս», «Դերասանի ցնորքը» և այլն): Հետագայում հաստատվել և գործել է Բրանում՝ մասնակցելով որոշ կինոժապավենների նկարահանմանը:

<sup>37</sup> **Չափրաստ Էդուարդ** (Չափրաստյան, 1891-1974), հայ դերասան, թատերագիր և հուշագիր: Ծնվել է Կ. Պոլսում, 6 տարեկանից բեմ է բաժրացել «Մնակյան» թատերախմբում, որտեղ խաղում էր հայրը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ա. Մադաթյանի, Տ. Պողոսի, Մ. Ջանանի, Հր. Ներսիսյանի, Տ. Նշանյանի, Գ. Կառվարենցի աջակցությամբ կարողանում է հավաքել 25-30 թատերասեր երիտասարդների և հիմնել «Պոլսահայ դրամատիկ» թատերախումբը: Էդ. Չափրաստը հայ թատերական այն եզակի գործիչներից է, որ եղել է գրեթե բոլոր հայ մշակութային կենտրոններում՝ Կ. Պոլիս, Հայաստան, Կովկաս, Ռուսաստան, Պարսկաստան, Իրաք, Սիրիա, Կիպրոս, Լիբանան, Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա, Իտալիա, Ֆրանսիա, Ամերիկա և այլուր: Հեղինակ է մի շարք պատմական թատերգությունների («Տիգրան Երկրորդ», «Փառանձեմ թագուհի», «Հայկ Նահապետ» և այլն):

<sup>38</sup> **Աձեւյան Տիրան** (1902-1991), ծաղրանկարիչ, դերասան: Ծնվել է Հալեպում, 1919 թ. խաղացել է «Պոլսահայ դրամատիկ» թատերախմբում: 1921 թ. Հալեպում կազմակերպել է թատերախումբ և բեմադրել Շիրվանզադեի «Կործանվածը», «Ավերակների վրա», «Պատվի համար», «Նամուս», Շանթի «Հին աստվածները» և այլ պիեսներ, որոնց մեջ գլխավոր դերերը ստանձնել է ինքը: 1923 թ. խաղացել է Հ. Արեկյանի, Բ. Աբովյանի և Կոստանյան թատերախմբերում, որտեղ նույնպես կատարել է գլխավոր դերեր: Հետագայում թողել է բեմը և լիովին նվիրվել նկարչությանը:

<sup>39</sup> **Մենտիյան Պողոս**, ծնվել է 1904 թ. Կուրդիստանում (Թուրքիա): Նախնական կրթությունն ստացել է տեղի վարժարանում: 1920 թ. հաստատվել է Լիբանանում և ծավալել երկարատև ու բեղուն թատերական գործունեություն:

<sup>40</sup> **Սարգիսյան Ժորժ** (1915-1982), հայ դերասան, բեմադրիչ և թարգմանիչ: Ծնվել է Խարբերդում: Մեծ վաստակ ունի լիբանանահայ թատերական կյանքում: Բեյրութի Համազգային մշակութային միություն «Գասպար Իփեկյան» թատերախմբի հիմնադիրներից է: Հյուրախաղերով հանդես է եկել Իրանում, Սիրիայում, Իրաքում, Եգիպտոսում, Կիպրոսում, ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում և Բրազիլիայում: Բեմադրել է քառասունից ավելի պիես, այդ թվում՝ Մուշեղ Բշիսանի «Մեռնիլը որքան դժվար է», Շանթի «Ինկած բերդի իշխանուհին», Ժակ Հակոբյանի «Կռունկը կը կանչե» պիեսները, Ընթացիկ «Ոսկի աքաղաղը» և այլն: Թարգմանել է 17 թատերախաղ:

ուր թատերգություններից, որոնք առանձին-առանձին բազմիցս ներկայացվել էին զանազան երկրների հայ գաղթօջախներում և արդեն արժանացել հայ թատերասեր հասարակայնության բարձր գնահատականին: Դ. Էվերեկյանին մտահոգում էր այն հանգամանքը, թե արդյո՞ք ինքը կարող է հաղթահարել բոլոր դժվարությունները և պատշաճ ներկայացնել պիեսների առանձին հատվածները հանդիսատեսին: Ինչպես նշում է Գ. Շիրվանյանը, Դ. Էվերեկյանի բեմադրությունը ունեցել է զգալի հաջողություն. «Ա. Ահարոնեանի «Արցունքի հովիտը», Յակոբ Այվազի «Շատերեն մեկը», Ալեքսանտրովիչի «Աշխարհի դատաստանը», Մ. Կիրիլեանի և Ե. Օտեանի «Հերոսախաղը», Տորթ. Գ. Պաղճեանի «Թաղականը», Էօժան Լապիշի «Խնամինները», Միհրդատ Հայկազի «Թիվ 5 խելագարը» և Գրեմ Միմոնի «Հարս ու կետուրը», բոլորն ալ մեր բեմերուն զարդերը, որոնք անգամ մը եւս տողանցեցին Դ. Էվերեկյանի ջանքերով Պոլսահայ միութեան համեստ ու փոքրիկ բեմին վրան բոլորին սիրտերը գրաւելով»<sup>41</sup>: Ընտրված երաժշտության կտորները նույնպես նպաստել են ներկայացման հաջողությանը, տեսարանները դարձրել են առավել պատկերավոր, իմաստալից և համոզիչ, իսկ հանդիսատեսը երաժշտության ազդեցության ներքո դյուրությամբ տեղափոխվել է դեպքերի միջավայրը՝ հաղորդակից դառնալով հերոսների մենախոսությանը: «Շատ տեղին էր նաեւ,- այնուհետեւ նշում է Գ. Շիրվանյանը,- իւրաքանչիւր խաղին սկզբնաւորութեան տրուած պատշաճ նախանուագները, որոնք բժախնդրութեամբ ընտրուած էին իրենց իմաստին համեմատ: Ձեռնարկին կու տար տարբեր փայլ մը եւ վեհութիւն մը»<sup>42</sup>: Դերերով հանդես են եկել Ռոզալիա Վասիլյանը, Ներսես Տոլմաճյանը, Հակոբ և Բերկրուհի Էվերեկյանները, Արշո Սասունյանը, Ժան Խանճյանը:

Այսպիսով, արդեն ավելի քան 40 տարի գործում է Պոլսահայ միությունը: Վերջինս շարունակում է եղբայրության, համագործակցության և միասնական ոգու ջահակիրը լինել համայնքի ներսում՝ երբեք չշեղվելով իր նշանաբանից՝ ծառայել մեկ և անբաժանելի հայության մեկ և անբաժանելի մշակույթին:

ТЕАТРАЛЬНАЯ ТРУППА МОНРЕАЛЬСКОГО  
СОЮЗА КОНСТАНТИНОПОЛЬСКИХ АРМЯН

БЕКАРЯН А. А.

Резюме

Усилиями обосновавшихся в Монреале константинопольских армян в 1967 году был создан Земляческий союз константинопольских армян, ставший поборником и верным защитником армянских традиций.

<sup>41</sup> Շիրվանյան Գ., նշվ. աշխ., էջ 16:

<sup>42</sup> Նույն տեղում:

С 1969 года Союз константинопольских армян приобрел здание, в театральном зале которого регулярно организуются художественные вечера и театральные представления на армянском языке. При Союзе константинопольских армян действует театральная труппа, пользующаяся популярностью среди монреальских армян. На протяжении более 40 лет Союз константинопольских армян играет консолидирующую роль в монреальской армянской колонии, пропагандируя армянскую культуру.